

## S

**ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ, ԿԵՍԱՐԱՑԻ.** — Պարսկական հիւպատոս Նիւ Եորքի (1884—1904). 1912 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը: Քէլէկեան խան տեսնելով 1894 ին գտնուած հայկական այն գեղակերտ մոզայիքը որ Դամասկոսի դբան մօտ երևան եկած էր, Ս. Յարութեան իսլամ զոնապանին նոր շինելիք տան տակէն, 250 ոսկիի ծախու կ'առնէ, փափաք յայտնելով որ մաս առ մաս այդ մոզայիքը փոխադրուի Ս. Յակոբի վանքը, պատշաճ տեղի մը յատակը անով զարդարելու համար: Միաբանութիւնը, սակայն, աւելի յարմար նկատելով՝ չխախտել զայն, նոր համաձայնութիւն մը կը կնքէ կալուածատիրոջ հետ եւ շէնքին յարկաբաժինը 600 ոսկիով ծախու կ'առնէ, Քէլէկեան խանի նուէրին վրայ վանքին անտուկէն աւելցնելով 355 ոսկի (*Տես Արձնգր. Տն. Ժողովի 1895, էջ 164*): Այս կերպով վեհանձն նուիրատուին նախաձեռնութեամբ Ս. Յակոբի վանքը կը յաջողի պահել նոյն հնութիւնը իր տեղւոյն վրայ, զնելով հոն մոզայիքի պահպանման մը: Սոյն թանկազին Մոզայիք-Յիշատակարանին մանրամասն նկարագրութիւնը արձանագրութիւններով եւ պատկերով տեսնել *Տ. Մեսրոպ Ս. եպօ. Նշանեանի յօդուածին մէջ (Թեոդիկ, 1927 էջ 399—406)*: Քէլէկեան խան ունի Գաղղ. եւ Անգղ. լեզուներով հնագիտական երկու հրատարակութիւններ հետեւեալ խորագրով. *Collection Kélékian; Etoffes et tapis d'Orient et de Venise. Notice de M. Jules Guiffrey. Paris, 1908: (Հա. 1908, էջ 128, 1911, էջ 312)*: *The Kélékian collection of Persian and analogus pottery. 1885-1910, Paris, 1910:*

**ՏԻԳՐԱՆ ՍՍԻԱԼԱՆԵԱՆՑ, ԶՄԻՒՆԻՒՍԻ.** — Ծ. 1821 Փետրամբիսին Զմիւռնիոյ մէջ. հայրը Գրիգոր (\* 1831) մայրը Թագուհի. աչկ. Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժին, իր ուսուցիչն էր Ռուբէն Անդրէաս Փափաղեան. տասնութամեայ տարիքին մէջ հայերէնի ուսուցչութեան կը կոչուի Իզմիրի Օրիորդաց վարժին